«ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՑ»
(Հրատարակման 230-ամյակի առթիվ)

ԳՐԻԳՈՐ ԹԱՆԱՆՅԱՆ

230 տարի առաջ՝ 1783 թվականին, Հնդկաստանի Մադրաս քաղաքում, հրատարակվեց «Որոգայթ փառաց» -ը՝ ոչ միայն հայ իրականության մեջ, այլև աշխարհում առաջին սահմանադրության նախագիծը (համեմատության համար նշենք, որ ԱՄՆ-ում այն ընդունվել է 1787 թ., Ֆրանսիայում և Լեհաստանում՝ 1791 թ.), որը նաև ազգային-ազատագրական շարժման ծրագիր էր ու դրա տեսական հիմնավորում: Այն խնդիրը, որը դրել էին հեղինակներն[1] իրենց առջև, լիովին իրականացավ, քանզի այդ աշխատությունը դարձավ հայ ազգային-ազատագրական շարժման տեսական զենք և գործնական ուղեցույց, արթնացրեց հային թմրությունից, բորբոքեց ազգային արժանապատվությունը, ոգեշնչեց ազատության ու արժանապատիվ գոյատևման, այսինքն՝ կանխորոշեց ազգային ինքնագիտակցության ու ազատագրական շարժման հետագա ողջ ընթացքը, դարձավ նրա մանիֆեստը: «Որոգայթ փառացը» հրատարակվել է (110 հատ, գինը՝ 10 ռսկի, 10-ը տպագրական ծախսերը փակելու, իսկ մնացածի վաճառքի գումարը պետք է ծախսվեր բարեգործական նպատակով)՝ տիտղոսաթերթին նշված 1773 թվական, որը, հավանաբար, այն տարին է, երբ արդեն իսկ նախնական տեսքով գրված-ավարտված էր գիրքը: Այն ավելի ուշ տպագրելով, տպագրիչները, սակայն, ձեռագրի անվանաթերթը պահպանել են անփոփոխ, իր նախնական տեսքով: Բացի այդ, գիրքը հրատարակվել է Շ. Շահամիրյանի որդի Հակոբ Շահամիրյանի (1745–1774) անունով: Այս հանգամանքը որոշ շփոթ է առաջացրել այն հարցում, թե ո՞վ է գրքի իրական հեղինակը: Նկատի ունենալով, որ գիրքը տպագրվել է Հակոբ Շահամիրյանի մահից բավական հետո, բանասիրության մեջ առաջ է քաշվել այն տեսակետը, որ թեև գրքի իրական հեղինակը Շահամիր Շահամիրյանն է, բայց տպագրելով Հակոբի անունով՝ հայր Շահամիրյանը ցանկացել է անմահացնել իր վաղամեռիկ տաղանդավոր որդու անունը: Խնդիրը քննելով փաստական նոր տվյալների հիման վրա՝ ձևավորվել է այն վարկածը, որ գրքի առաջին մասը՝ Ներածությունը, Հակոբ Շահամիրյանի գործն է՝ առանց նրա վերջին վեց պարբերությունների, իսկ երկրորդ հատորի նախնական շարադրանքը կամ ուրվագիծը հեղինակել է դարձյալ Հակոբը, բայց նրա ամբողջացմանը, վերջնական տեսքին բերելուն մասնակցել են Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը և հատկապես Շահամիր Շահամիր-

---

[1] Հեղինակ *բառի հոգնակին օգտագործվում է աշխատության ընդհանուր բնութագրման, իսկ եզակին՝ տվյալ մասի շարադրողի վերաբերմամբ՝ ըստ Ա. Հովհաննիսյանի (տե՛ս Հ. Ր. Ոսկանյան.* К истории возникновения «Западни честолюбия».– «Известия» АН АрмССР, 1948, № 3, с. 21–24)*:*

յանը՝ առանց իրենց անունը նշելու[2]: Այս եզրակացությունը բավական հիմնավորված և ընդունելի համարելով, կարծում ենք, որ հասունացել է տվյալ հարցի այն լուծումը, ըստ որի «Որոգայթ փառացի» համահեղինակներ պետք է համարվեն հայր և որդի Շահամիրյանները: Մյուս կողմից, առաջաբանում հեղինակը նշում է, որ «Երկու պատճառով էր, որ չէի կամենում հիշեցնել շարադրողիս անունը, նախ՝որպեսզի տգետները չհայհոյեն, երկրորդը՝որպեսզի իմաստուններն էլ չփառաբանեն»[3]: Անսալով հեղինակի բազմիցս հնչեցվող թախանձագին խնդրանքին, մենք ներողամտությամբ ենք վերաբերում աշխատության «թերություններին» (հայերենի ոչ կատարյալ իմացություն, անվարժ շարադրանք՝ըստ հեղինակների)[4], բայց չենք կարող չարտահայտել մեր անկեղծ հիացմունքն ու հաճելի զարմանքը քննարկվող նյութի ահռելի ծավալային ընդգրկման և բովանդակային անհատակ խորության վերաբերյալ: Բայց մինչ այդ, փորձենք պարզել սոցիալ-տնտեսական ու քաղաքական այն պայմանները, որոնց առաջադրած խնդիրների անմիջական արձագանքն էր «Որոգայթ փառացը»:

Հայաստանը XVIII դարում թեև շարունակում էր մնալ ֆեոդալական երկիր, բայց և այնպես կապիտալիստական հարաբերությունները ծավալվում ու զարգանում էին գաղթօջախներում, մասնավորապես, Հնդկաստանում: Այդ զարգացումները հանգեցրին բուրժուական դասակարգի և ժամանակակից իմաստով հայ ազգի ձևավորմանը, որոնք էլ առաջավոր մտքի զարգացման համար ստեղծեցին ավելի նպաստավոր պայմաններ, քան նախորդ դարերում: Դեռևս XVII դարից սկիզբ առած ազգային-ազատագրական շարժումները մեծ ծավալ ստացան՝ կողմնորոշվելով դեպի Ռուսաստան: Եվրոպական երկրների հետ գոյություն ունեցող տնտեսական հարաբերություններն ավելի ամրացան, որը նպաստեց ուժեղացնելու Եվրոպայում ծայր առած հեղափոխական շարժումների գաղափարական ազդեցությունը նաև հայերի վրա: Այդպիսի պայմաններում հայ կյանքի բնորոշ կողմերից մեկը դարձավ քաղաքական զարթոնքը՝ իրեն ենթարկելով նաև տնտեսական մտքի զարգացումը: Սոցիալ-տնտեսական այս նախադրյալները հիմք հանդիսացան, որպեսզի ձևավորվի հայ առևտրական բուրժուազիա և բուրժուական մտավորականություն, ինչպես նաև հայ ժողովրդի ազգային-ազատագրական գաղափարախոսություն ու մշակվի այդ նպատակներն իրագործելու գործողությունների կոնկրետ ծրագիր: Բայց տարբեր դասակարգերի կողմից այդ զարթոնքը տարբեր ձևով ընկալվեց: Ֆեոդալիզմի ներկայացուցիչները գտնում էին, որ հայերը ազգային անկախություն պետք է ձեռք բերեն ոչ թե ակտիվ պայքարի, այլ եվրոպական որևէ պետության օգնությամբ: Նորելուկ բուրժուազիայի գաղափարախոսներն այլ կերպ էին մտածում: Նրանց կարծիքով, օտար պետությունների միջամտությունը պետք է նախապատրաստվի ժողովրդի ակտիվ ելույթներով պարսից և տաճկաց բռնապետությունների դեմ: Առաջին ուղղության պարագլուխն էր կաթողիկոս Սիմոն Երևանցին, իսկ երկրորդինը՝ մադրասյան խմբակի անդամները: Վերջիններս, ապրելով և ստեղ-

---

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Հ. Շ ա հ ա մ ի ր յ ա ն, Շ. Շ ա հ ա մ ի ր յ ա ն. Որոգայթ փառաց, Երևան, 2002, էջ 71:*

[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 59:*

ծագործելով Մադրասում, 1770-ական թվականներին հիմնեցին Մադրասի դպրոցը, հանդես գալով որպես հայ առաջին լուսավորիչներ, առաջացնելով մտավոր և քաղաքական մեծ շարժում: Այդ խմբի ականավոր ներկայացուցիչներն էին՝ Հ. Էմինը, Մ. Բաղրամյանը, Շ. Շահամիրյանը, Հ. Շահամիրյանը, Հ. Շմավոնյան և ուրիշները: Մադրասում հիմնելով տպարան՝ նրանք հրատարակում են մի շարք աշխատություններ, որոնք իրենց բովանդակությամբ, առաջադրած խնդիրներով նոր երևույթ էին հայ քաղաքական, իրավական, փիլիսոփայական մտքի պատմության մեջ: Հրատարակված աշխատությունների մեջ, անկասկած, իր ուրույն տեղն ունի «Որոգայթ փառաց» աշխատությունը:

Բացի սոցիալ-տնտեսական նախադրյալներից ու քաղաքական պայմաններից, «Որոգայթ փառացն» ուներ նաև իր տեսական-գաղափարական ակունքները, որոնք են՝ Աստվածաշունչը, հայ ժողովրդի և Հռոմեական կայսրության բազմադարյան պատմությունը, Մեծ Բրիտանիայի պետական կառավարման դեմոկրատական սկզբունքները, հայ իրավական միտքը, ինչպես նաև եվրոպական սոցիալ-քաղաքական ու փիլիսոփայական-լուսավորչական գաղափարները[5]: Փիլիսոփայությունը հեղինակների համար հանդես է գալիս որպես քաղաքական ու ազգային-ազատագրական գաղափարների տեսական ու աշխարհայացքային հիմնավորում, իսկ վերջիններս էլ իրենց անմիջական կնիքն են դնում նրա փիլիսոփայական հայացքների վրա: Անձի ազատության և սեփականության անձեռնմխելիության, ունեցվածքի նկատմամբ տեր լինելու մեծբրիտանական ժողովրդի իրավունքի մասին հիշատակումը[6] վկայում է, որ հեղինակները ծանոթ են եղել բրիտանական օրենքներին, ի թիվս որոնց և՝ «Ազատության մեծ խարտիային» (1215), «Իրավունքի մասին հանրագրին» (1628), «Հաբեսա կորպուս ակտ» (1679) և «Բիլլ իրավունքների մասին» (1689) սահմադրական կարգավիճակ ունեցող օրենքների ժողովածուներին: Անգլիան, լինելով սահմանադրական միապետություն, առ այսօր էլ չունի սահմանադրություն որպես այդպիսին, ինչպես նաև Ջոն Լոկի «Պետության կառավարման մասին երկու տրակտատներ», «Քննախոսություն մարդկային ըմբռնողության մասին» և այլ աշխատություններին: Վերջիններիս ծանոթ լինելը շատ բնական էր, քանի որ XVIII դարում կրթված մարդիկ, կտրուկ հանդես գալով բռնապետության դեմ, Անգլիան դիտում էին որպես ազատության հայրենիք և ողջ եվրոպական լուսավորական մտքի համար Լոկը հիմնական հեղինակությունն էր՝ իր քաղաքական հայացքների համար[7], որից ծնունդ են առել նաև ֆրանսիական ու գերմանական լուսավորչությունը: Ի դեպ, Լոկը Նոր ժամանակների իմացության տեսության մեջ փորձնամատերիալիստական ուղղության հիմնադիրն էր: Նա առաջիններից մեկն էր, ով հայեցակարգային ձևակերպում տվեց ազատական (լիբերալ) ուսմունքին, որպես նորաստեղծ բուրժուազիայի գաղափարախոսութ-

---

[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 15:*

[6] *Տե՛ս նույն տեղում, էջ 42:*

[7] *Տե՛ս* Б. Р а с с е л. История западной философии, кн. 3, ч. 1, гл. 15. М., 1993.

յում[8], որը շարունակեց Կ. Ա. Հելվեցիուսը՝ ձևակերպելով անձի ազատության, օրենքի առջև բոլորի հավասարության, մասնավոր սեփականության իրավունքի հիմնական սկզբունքները[9]:

Նշված տեսական աղբյուրների մի մասն ակհայտ է, մյուս մասը բխում է աշխատության բուն բովանդակությունից, քանզի Ներածության մեջ հեղինակն ինքն է խոստովանում, որ երկրորդ գրքում ամփոփված օրենքները սոսկ իր ցանկության ու մտքի ծնունդը չեն և ոչ էլ իր այգու պտղից են, այլ «այն այգիների իրավունքի ու արդարության ծառի պտղաբերումից, որոնք հին ժամանակներից սկսած համբերությամբ տնկել են քրիստոնյա տիեզերական և արդար թագավորությունների բարեպաշտ թագավորները»[10]: Սա ուղղակի ակնարկ է այն մասին, որ աշխատությունը պատրաստելիս ինքն օգտվել է իրավագիտական և փիլիսոփայական ինչ-որ աղբյուրներից, անկասկած, եվրոպական լեզուներով (մասնավորապես անգլերեն և ֆրանսերեն) հրատարակություններից:

«Որոգայթ փառաց»-ը իրավաճանաչողական և գիտամեթոդաբանական առումով յուրովի ընդհանրացում է Հայ եկեղեցական կանոնագրքերի, ինչպես նաև Հովհաննես Օձնեցու, Հովհաննես Սարկավագի, Դավիթ Ալավկառդու, Մխիթար Գոշի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Սմբատ Սպարապետի և հայ հասարակական-իրավական մտքի էլի շատ ու շատ երախտավորների բեղմնավոր գործունեության արդյունքները:

Մադրասի խմբակի անդամների աշխարհայացքի վրա մեծապես ազդել են նաև Օսմանյան կայսրության և Պարսկաստանի բռնապետություններին ենթարկված Հայաստանի ծանր դրությունը, ազատագրության հասնելու և ինքնուրույն, անկախ պետականություն ստեղծելու հայերի ձգտումը: Նրանք հանդես են եկել ինքնակալության ու բռնակալության քննադատությամբ, զարգացրել սահմանադրական գաղափարներ, ձգտել ապագա ազատագրված Հայաստանում ստեղծել բուրժուական հանրապետություն, հակառակ դեպքում՝ գոնե սահմանադրական միապետություն, քարոզել են ֆեոդալական կարգերի վերացում և հայկական պետականության վերածնունդը կապել են Ռուսաստանի օգնության հետ:

Գրքի համար հեղինակներն ընտրել են չափազանց բնութագրական և հիշողության մեջ տպավորվող խորագիր՝ «Գիրք, որ կոչի Որոգայթ փառաց»: Գրքում, մանավանդ Նախերգանքում և Ներածության բաժնում, մի քանի անգամ բացատրվում է աշխատության նպատակը, այդ նպատակին հասնելու միջոցները, ինչպես նաև խորագրի իմաստը: Ըստ այդմ՝ «Որոգայթ փառաց»-ը պետք է ըմբռնել որպես փառասիրության կամ փառատենչության թակարդ՝ կալանքի ենթարկելու համար ամեն անկարգ գործ, կամայական ու բռնակալ մարդկանց՝ ուրիշների վրա իշխելու ցանկությունները սանձահարող օրենսգիրք ու սահմանադրություն, քանզի մարդկային ոչ մի անհատ իրավազոր չէ իշխելու ի վերուստ բանական բնութ-

---

[8] *Տե՛ս* Дж. Локк. Сочинение в трех томах, т. 1.– В кн.: И. Нарский. Джон Локк и его теоретическая система. М., 1985, с. 3.

[9] *Տե՛ս* И. С. Нарский. Западноевропейская философия XVIII века. М., 1973, с. 254.

[10] *Հ. Շահամիրյան, Շ. Շահամիրյան. նշվ. աշխ., էջ 71:*

յամբ օժտված մարդկանց վրա, բացի Արարչից: Գիրքը բաղկացած է Նախերգանքից՝ ուղղված «պատվական» ընթերցողին, ընդարձակ Ներածությունից՝ պատմափիլիսոփայական մաս (առաջին հատոր), բուն Սահմանադրությունից (երկրորդ հատոր) և վերջաբանից: Ներածությունն սկսվում է աստվածաշնչյան ու պատմական հիշատակումներով՝ Նոյի իջնելը Մասիսից Արարատ երկիր, Հայկի հաղթանակը Բելի նկատմամբ, Գրիգոր Պահլավունու չարչարանքներն ու քրիստոնեության ընդունումը Հայաստանում, իր հավատն առ Տեր Աստված անխախտ պահելն օտարների լծի տակ՝ հետին թշվառության ու բազում տառապանքների պայմաններում, որոնք հեղինակի ընկալմամբ՝ առանց պատճառի չեն, այլ Աստծուց են տրվել Հայաստանին և հայ ժողովրդին՝ իբրև բացառիկության պատիվ: Այդ պատվին արժանացած ազգն իրավունք ունի և պարտավոր է Աստծու կողմից օրհնյալ տարածքում վերականգնել իր պետականությունը, ազատությունն ու անկախությունը: Անդրադարձ կատարելով հայ ժողովրդի պատմությանը՝ առավելապես ի դեմս Մովսես Խորենացու, հեղինակը փորձում է վեր հանել մեր ազգին պատուհասած դժբախտությունների բուն պատճառները և գալիս է այն եզրակացության, որ դրանք են՝ դավաճանությունը, կամայականությունն ու անարդարությունը, անօրեն իշխանավարումն ու անկարգությունը: Մեր ազգը չի ապրել կարգ ու կանոնով, օրենքով, և Հայոց աշխարհի ու ազգի վրա ինքնակալ թագավորների, բռնապետ իշխանավորների անօրինությունների և կամայական արարքների պատճառով կորցրել է ամեն ինչ՝ իր ազատությունն ու երկիրը, ընկել օտարների լծի տակ[11]: Բերվում են բազմաթիվ օրինակներ՝ հռոմեական ու մեր ազգի պատմությունից, որոնք ցույց են տալիս, որ այն ժամանակ, երբ ազգն ապրել է արդարությամբ ու օրինականությամբ, կարգ ու կանոնով, եղել է ազատ ու երջանիկ, իսկ երբ տիրել է անարդարություն ու կամայականություն, ազգը, ի վերջո, կորցրել է իր ազատությունն ու երջանկությունը: Այստեղից հետևում է, որ եթե հայ ազգն ուզում է ապրել ազատ ու երջանիկ, իրագործել Աստծուց տրված առանձնաշնորհը, պետք է ստեղծի մի թագավորություն, որտեղ իշխանության միակ տերը ժողովուրդն է, իսկ միակ թագավորը՝ օրենքն ու օրինականությունը: Օրենքներն են միայն հաստատուն հիմք մեր ազգի փրկության համար և միջոց՝ բարվոք կառավարելու հայոց ազգն ու աշխարհը: Հետաքրքիր է, որ հեղինակը մարդու ազատությունը դիտում է որպես բնական իրավունք, նրա բնական բնույթին համապատասխանող վիճակ: Այդ ազատության վրա ոչ մի բանական էակ իշխելու իրավունք չպետք է ունենա, բացի Արարչից և օրենքից: Թեև աշխարհն ունի իր արարիչը, բայց իրական կյանքում ամեն բան իր առաջացման և փոփոխման օրենքն ունի: □Հավաստի է և աներկմտելի, որ արեգակի ներքո որևէ բան ոչ եղել է և ոչ կարող է լինել, եթե դա իր ընթացքի օրենքը չունի, որով պայմանավորված է նրա ճանապարհն ու գործը□[12],– գրում է Հ. Շահամիրյանը: Իր տեսակետը հիմնավորելու համար նա իրավացիորեն ասում է, թե «արհեստավորը որոշ օրենքներով է ղեկավարվում, երբ

[11] *Տե՛ս նույն տեղում, էջ 13:*

[12] *Նույն տեղում, էջ 31:*

կրակի օգնությամբ հալում է երկաթը, հորինում է ժամացույցի տար-

բեր տեսակի մասնիկներ ու ղեկավարվելով այդ օրենքներով, դրանց շարժմանը կենդանություն է տալիս.... օրենքներով է, որ ջրաղացին չափով ջրի կերակուր է տրվում, իսկ սա էլ շարժումով կենդանանում է, իր աշխատանքով ծառայում մեզ...»[13]: Եթե, օրինակ, ժամացույցն աշխատում է, ցույց տալով մեզ ժամանակը, ապա դա տեղի ունի շնորհիվ այն բանի, որ ժամագործը դրա մասնիկները միացնելիս ղեկավարվել է ոչ թե սուբյեկտիվ ցանկությամբ, այլ օբյեկտիվ օրենքներով: Այդ այդպես է նաև այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է հասարակությանը, քանզի ինչպես բնության մեջ են գործում օրենքներ, այնպես էլ հասարակության մեջ պետք է գործեն օրենքներ, թերևս այն տարբերությամբ, որ եթե բնության օրենքների ստեղծողը Տեր Աստվածն է, ապա ժողովրդի կյանքի կազմակերպման օրենքները ստեղծվում են մարդկանց կողմից, որպես համընդհանուր կամքի դրսևորում: Դրանք նույնքան աներկբայելի են, որքան բնության օրենքները, որոնց անտեսումը հղի է կործանարար հետևանքներով, քանի որ օրենքի և օրինականության խախտումը դեմ է երևույթների բնությանը և տանում է դրանց քայքայման ու կործանման: Ճիշտ է, խոսելով բնության և հասարակության օրենքների մասին, հեղինակը, բնության և հասարակության օրենքների միջև տարբերություն չի դնում: Դեռ ավելին, հաճախ շփոթում է հասարակական զարգացման օրենքները պետության սահմանած օրենքների հետ: Բայց այդպես էին մտածում նաև Պ. Ա. Հոլբախն ու Կ. Ա. Հելվեցիուսը, որոնք լինելով նատուրալիստներ, գտնում էին, որ հասարակական օրենքները սոսկ բնության օրենքների շարունակությունն են[14]: Կարևորն այստեղ թերևս այն է, որ հեղինակը նկատում է այդ երկու ոլորտներում անխախտ ու օբյեկտիվ օրենքների առկայությունը և ըստ այդմ՝ մարդկային հարաբերությունները օրենքներով կարգավորելու անհրաժեշտությունը:

Շահամիրյանը օրենքը հակադրում է կամայականությանը՝ համարելով օրենքի անտեսումը կամայականության դրսևորում: Կամայականության հեղինակները ֆեոդալներն են, իսկ նրանցից ամենամեծը՝ թագավորն է: «Եթե սրա ընթերցողն այնպիսի պատանի լինի, որ իր մտքում կարողանա գլխի ընկնել, թե այդ ինչպես է, որ երբեմն կայսեր կամ թագավորների հրամանը, անտեսելով մեր բնության հետ համապատասխանությունը, փայլակի պես արձակվում են մեր բնության դեմ...»[15],– ասում է Շահամիրյանը: Մարդու ծայրահեղության և սանձարձակության մեջ ընկնելու պատճառը, Թ. Հոբսի նման, Շահամիրյանը համարում է մարդու հեղհեղուկ լինելը, որին պետք է ամուր ու մշտական օրենքներով սանձահարել, դնել որոշ շրջանակների մեջ: Շահամիրյանը գրում է. «... մեր կյանքի ընթացքի համար և մեր փոփոխական բնությունը լծորդենք անշարժ օրենքներին, որպեսզի եթե ըստ մեր բնության խառնվածքի կյանքում ժամանակ առ ժամանակ մեր միտքը հակում հանդես բերի դեպի անբան անասուններին հատուկ արարքներ, մեր օրենքների շղթաներն ու կապանքները

[13] *Տե՛ս նույն տեղում, էջ 36:*

[14] *Տե՛ս* И. С. Н а р с к и й. Западноевропейская философия XVIII века, с. 219.

[15] *Հ. Շ ա հ ա մ ի ր յ ա ն, Շ. Շ ա հ ա մ ի ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 62:*

կապկպեն ու սաստեն մեր բնությունը և օրենքով դատապարտեն ...»[16]: Հեղինակը բնությունն ու հասարակությունը դիտարկում են իրենց անվերջ շարժման ու փոփոխման մեջ: Ընդունելով շարժումն ու զարգացումը՝ Շահամիրյանը լուսավորիչների նման[17] հայտարարում է, որ այդ գործընթացում նոր որակներ չեն առաջանում, որովհետև «ոչ երկաթն է իր բնությամբ փոխվում արծաթի, և ո՛չ էլ ոսկին իր բնությամբ վերածվում ադամանդի և առհասարակ ամեն մի բնություն եղել և մնում է անփոփոխ»[18]: Սա մետաֆիզիկական հարցադրում է, որը հատուկ է լուսավորիչներին, սակայն միայն երևույթներին ընդհանուր մոտեցման դեպքում: Բայց երբ անցում են կատարում կոնկրետ հարցերի քննությանը, նրանք հաճախ են մեղանչում մետաֆիզիկայի դեմ և ցուցաբերում դիալեկտիկական մոտեցում: Այսպես, օրինակ, բացահայտելով մարդու բնության ներքին հակասությունները, Շահամիրյանը եզրակացնում է. «Ուրեմն, ի՞նչ անեմ այսպիսի անառակ բնության հետ և ինչպե՞ս կարելի է կառավարել սրան, բանն այն է, որ բոլորը միևնույն բնությունից են, ինքնըստինքյան ունեն նույն փոփոխական բնությունը. այն, ինչ որ այսօր գեղեցիկ է, վաղը տգեղ է. այն, ինչ որ քաղցի ժամանակ քաղցր է, կշտանալուց հետո դառնում է անհամ»[19] և այլն: Անկասկած, գեղեցիկի վերածումը տգեղի որակական փոփոխություն է, և լուսավորիչները չեն կարողանում այդ չընդունել, հակասության մեջ մտնելով իրենք իրենց հետ: Քննարկելով շարժման հարցը՝ լուսավորիչները շեղվում են ոչ միայն մետաֆիզիկայից, այլև իդեալիզմից: Շարժումը, ասում են նրանք, հետևանք է նյութի տարբեր տարրերի փոխադարձ հակադրության, այլ կերպ ասած, շարժման աղբյուրը ոչ թե նյութից դուրս է, այլ նյութի մեջ: Շարունակելով Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Գրիգոր Նարեկացու, դեռևս Հիպոկրատից ու Պլատոնից եկող աշխարհն ու մարդու մարմինը չորս նախնական տարրերից կազմված լինելու գաղափարները՝ Շահամիրյանը գրում է. «Նախ նայեցեք և տեսեք, որ մեր բնությունը չորս անմիաբանների և հակառակ տարրերից է սահմանված և թե ինչպիսի համահավասար նույնանման են շարժվում, կենդանի պահելով իր մեջ այս իրար հակառակ տարրերը խաղաղ կերպով, իր անխախտ սահմանի պատճառով»[20]: Շարժումը, ըստ Շահամիրյանի, կենդանության, մշտական ստեղծագործական աշխատանքի աղբյուր է, դա հակասությունների մի ամբողջ շղթա է, հակասություններ, որոնք հանդես են գալիս ամենուրեք և միշտ: Նա գրում է.«...մեր բնությունը շարժվում է և օրավուր փոխվում է և չարչարանքի մեջ է պահում կերակուրների, սրտի ցանկության, թշվառությունների,աղքատության կամ հպարտության ու հարստության և այլ պատճառներով. ես տուն եմ շինում, իսկ որդիս քանդում է, ես այգի եմ տնկում, թոռս

---

[16] *Նույն տեղում, էջ 20:*

[17] *Տե՛ս* И. С. Н а р с к и й. Западноевропейская философия XVIII века, с. 202, 253.

[18] *Հ. Շ ա հ ա մ ի ր յ ա ն, Շ. Շ ա հ ա մ ի ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 27:*

[19] *Նույն տեղում, էջ 51:*

[20] *Նույն տեղում, էջ 23:*

քանդում է և շտեմարան շինում»[21] *և այլն: Շարժումը, իհարկե, պատկերացվում է որպես հակասություն, սակայն հակասությունը տեղի ունի ոչ թե միևնույն իրի կամ երևույթի մեջ, այլ տարբեր էակների մեջ, որը, անշուշտ, հարցի մետաֆիզիկական լուծում է: Իսկ ինչպե՞ս ենք մենք ճանաչում շարժումը և առհասարակ օբյեկտիվ իրականությունը: Հետևելով Լոկին՝ Շահամիրյանը նույնպես ճանաչողության հիմնական աղբյուրներն է համարում փորձը և բանականությունը, գիտելիքի ստացման հիմքն ընդունելով զգայական ընկալումները*[22]*: «... ոչ մի գործ չի կարող սկսվել մարմնի շարժմամբ, մինչև որ մեր մտքի մեջ նախապես չտպավորվի...»*[23]*,– գրում է նա: Լոկը, ինչպես նաև Հոբսը, օրինակ, կարծում էին, որ գույնը, հոտը, համը ոչ թե օբյեկտիվ, այլ սուբյեկտիվ հատկություններ են, այսինքն՝ դրանք առաջանում են ընկալվող սուբյեկտի մեջ: Լինելով նոմինալիստներ՝ նրանք վճռականորեն մերժում էին ընդհանուրի (ունիվերսալիստների) գոյաբանական և իմացաբանական ռեալությունը: Ընդհանուրը Լոկի կարծիքով ընդամենը անուն է, որով նշանակվում են տվյալ դասին պատկանող բազմաթիվ իրեր*[24]*: Համանման տեսակետ է պաշտպանում նաև Շահամիրյանը, գտնելով, որ ճանաչողությունն սկսվում է անունի իմացությունից, որը կարող ենք անել, իմանալով շարժման ձևի անունը, օրինակ, քարի անկումը կամ մարդու բնույթի անկայունությունը: Շահամիրյանը գրում է. «Ինչպես ընդունված է ամեն գործի համար, նախ պետք է ճանաչել անունները... Այսպես, օրինակ, մինչև մենք մեր անդամների ոսկորների անունները չենք տալիս, ոչ ոք չի կարող մեր անձնավորության բնության մասին խոսել. երբ ասում ենք, թե Մանեսի բազուկը ջարդվեց, մենք չենք կարող իմանալ, թե ինչ անդամ է բազուկը, եթե անունների մասին ծանոթություն չունենք»*[25]*: Այլ կերպ ասած, ճանաչողությունը սկսվում է առարկայի անունն իմանալուց: Շահամիրյանը թեև նոմինալիստ էր, բայց անունը նրա համար անիմաստ վերացականություն չէ, այլ կոնկրետ իրի՝ ոսկրի կամ բազուկի անունն է: Անունը փոփոխական է: Միևնույն իրը կարող է ունենալ շատ անուններ: Այսպես, օրինակ, «ամեն մի գավառին զանազան անուններ են տալիս. իրերի անունները, տարբեր գավառների անունները խոսակցության մեջ խստորեն տարբերվում են իրարից, որը դժվարացնում է միմյանց հասկանալը, օրինակ, մեր իշխանների անունները, որոնց ոմանք այժմ մելիք են անվանում, ոմանք՝ ռես, ոմանք՝ քյոխվա, ոմանք՝ քալանթար»*[26]*,– ասում է Շահամիրյանը: Ուրեմն անունը փոփոխական է, պատմական, կապված մարդկանց կոնկրետ միջավայրի, կրած ազդեցությունների և այլ հանգամանքների հետ: Բայց և այնպես, դրանից մեր հեղինակը սուբյեկտիվիստական եզրակացություն-*

---

[21] *Նույն տեղում, էջ 51:*

[22] Дж. Локк. Сочинение в трех томах, т. 1, с. 154.

[23] *Հ. Շահամիրյան, Շ. Շահամիրյան. նշվ. աշխ., էջ 29:*

[24] *Տե՛ս* Дж. Локк. *Նշվ. աշխ. էջ 429–431,* И. С. Нарский. Западноевропейская философия XVII века, гл. 3. М., 1974.

[25] *Հ. Շահամիրյան, Շ. Շահամիրյան. նշվ. աշխ., էջ 60:*

[26] *Նույն տեղում, էջ 61:*

ներ չի անում, ինչպես դա արեցին Դ. Հյումն ու Ջ. Բերկլին[27], այլ գտնում է, որ ամեն անուն իր կրողն ունի: Իսկ ինչպե՞ս են առաջանում անունները: Այս հարցին Շահամիրյանն ուղղակի պատասխան չի տալիս, սակայն իր աշխատության առաջաբանում դիմելով ընթերցողին՝ առհասարակ ճանաչողության ընթացքի մասին գրում է. «... ձեզ սովորություն դարձրեք տեսնել, ճանաչել և ապա վկայել հաստատելու»[28] այս կամ այն միտքը: Բայց որովհետև զգայությունները փոփոխական են, այդ պատճառով էլ չկա մեկը, որ միևնույն երևույթը կամ առարկան միշտ միատեսակ գնահատի: «Երկրի վրա ոչ մի մարդ (դեռ) չի ծնվել, որ զար ու մնար մի հիմքի և հաստատության վրա, մի խոսքի, մի գործի և մի մտածողության վրա»[29]: Եթե որևէ այլ բան նկատի չառնվի, բավական է մարդկանց տարբեր հասակներ վերցնել, այդ ժամանակ իսկույն հայտնի կդառնա, թե «որքան տարբեր փոփոխություններ է նկատելի իր բնության մեջ... Ոչ ոք չի կարող ժխտել, որ այն, ինչ այսօր մեզ համար լավ է, ախորժելի, շահավետ և ուրախալի, վաղը կարող է դառնալ վատ, անախորժ, վնասակար և տարակուսելի»[30]: Իրը չէ, որ կորցնում է իր այս կամ այն հատկությունը, այլ մեր վերաբերմունքն է փոխվում նրա նկատմամբ, արդարացիորեն նկատում է հեղինակը. չարությունն ու բարությունն իրին հատուկ չեն, որին ձգտում է միտքը, այլ մեր բնության տարրերի բերածն է, մեր բնության խառնվածքի մեջ եղած զանազան օրինավոր պատճառների ծնունդը, կապված երբեմն կերակուրի, երբեմն փարթամության, երբեմն պատահումների, երբեմն առաջընթաց տարբերության հոխորտության հետ, ինչպես ոմանք ասում են, թե բախտից է»[31]: Սա նույնպես Հոբսի և Հոլբախի որոշակի ազդեցության արտահայտությունն էր, ովքեր հասարակական գործընթացների դրդապատճառները հանգեցնում էին պսիխոլոգիզմի, իսկ վերջինս էլ ֆիզիոլոգիզմի[32]: Օրինակ, մաղձի ավելորդ դառնությունը կարող է մարդու հավասարակշռությունը կորցնելու պատճառ դառնալ, հարկադրել մարդուն չմտածված գործողություններ կատարել, ասենք, օրինակ, պատերազմ հայտարարել կամ ժողովրդին քաղցի դատապարտել, եթե նա պետության ղեկավար է,– ասում է Հոլբախը: Նա բախտին մեծ տեղ է տալիս, պետական իմաստուն ղեկավարի ծնունդն անգամ կապում է բախտի հետ: Իր վերոհիշյալ հարցադրումներով Շահամիրյանը, փաստորեն, նույն տեսակետն է զարգացնում: Ըստ Շահամիրյանի՝ իր բնությամբ մարդն անկայուն է: Բայց անկայունությունը կարելի է վերացնել նրա մեջ կայուն հենարան ստեղծելու միջոցով, որն է բանականությունը: Լուսավորչական ռացիոնալիզմին համահունչ, նա բանականությանը խոշոր դեր է վերապահում և ավատատիրական հասարակության բոլոր այլանդակությունները՝ անգամ միապետության գոյությունը, կապում է բանականության փո-

---

[27] *Տե՛ս,* И. С. Н а р с к и й. Отношение Беркли к Локку.– В кн.: Беркли. Сочинения. М., 1978, с. 12–17.

[28] *Հ. Շ ա հ ա մ ի ր յ ա ն, Շ. Շ ա հ ա մ ի ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 6:*

[29] *Նույն տեղում, էջ 19:*

[30] *Նույն տեղում:*

[31] *Նույն տեղում:*

[32] *Տե՛ս* И. С. Н а р с к и й. Западноевропейская философия XVIII века, с. 219.

խարեն զգայությամբ ղեկավարվելու հետ: Բանականությունն աստվածային է, և տրված է մարդուն ոչ թե իր նմանի, այլ բնության վրա իշխելու համար: Շահամիրյանը գրում է. «Մեր նախնի Ադամն իր բնական բնությամբ կարողացավ աստծուց իշխանություն ստանալ, որպեսզի իշխի երկրի վրա, բայց ոչ երբեք մարդու բնական բնության վրա[33]*: …Բանականությունն ուրիշների վրա իշխելու հետ անհամատեղելի է: Առհասարակ ինքնակալության ամեն մի ձև հակաբնական է: Այդ բանը անասուններին անգամ հասկանալի է: Անասուններն անգամ (ինքնակալներին) իրենց մեջ չեն ընդունում, ուստի մեր բնական բնությանը մեծ ամոթանք է, որ մենք ենթարկվում ենք բնությամբ մեր նմաններին»*[34]*,– գրում է Շահամիրյանը: Հայ լուսավորիչների համար բանականության դերի հարցը զուտ իմացաբանական հարց չէր, այլ նաև սուր քաղաքական, որը դարձյալ ֆրանսիական մատերիալիստների ազդեցության արտահայտության մի ձև է: Մարդկանց գործունեության շարժիչ ուժը համարելով բանականությունը՝ լուսավորիչները եկան այն եզրակացության, որ հասարակության մեջ տեղ գտած բոլոր տեսակի չարիքների ակունքը, ի վերջո, բանականության պակասն է, մարդկանց տգիտությունը*[35]*: Մանրամասն քննության առնելով հայ ժողովրդի անցած ուղին, նրա կրած տանջանքներն ու տառապանքները՝ նրանք եզրակացրին, որ դրանց պատճառները ոչ այնքան օտարազգի իշխանների տիրապետությունն է եղել, որքան մեր տգիտությունը և անմիաբանությունը: Տգետ չլինելու, բանականությամբ ղեկավարվելու դեպքում ամեն տեսակ տանջանքներից նրանք ազատ կլինեին, ասում են լուսավորիչները: Եթե ուզում ենք երջանիկ լինել, պետք է վերջ տանք տգիտությանն ու անմիաբանությանը, պետք է բարձրացնենք մեր հայրենակիցների գիտակցությունը, որովհետև լուսավորությունն է մարդկանց մեջ վառում սեր դեպի ազատությունը: Լուսավորիչները հայերի ազգային անկախությունը կապում էին ինքնակալության, այսինքն՝ ավատատիրության վերացման հետ: Հայերը օտար գերությունից կարող են ազատագրվել և վերջ տալ ֆեոդալիզմին միայն քաղաքական անկախություն, սեփական ազգային նոր տիպի պետություն ստեղծելու միջոցով, որը «... համապատասխանի ու ներդաշնակ լինի մարդկային բանական բնությանը»*[36]*: Այդ նորը պետք է լինի անգլիական տիպի հանրապետությունը: Անգլիական կարգերի մեջ հայ լուսավորիչները հանրապետական ոգի էին դնում և, ի տարբերություն Ֆ. Մ. Ա. Վոլտերի, որը լուսավորված, Թ. Հոբսը՝ բացարձակ և Լոկը՝ սահմանադրական միապետության կողմնակից էին, հանդես էին գալիս պառլամենտական հանրապետություն ստեղծելու պահանջով: Լուսավորիչների կարծիքով հայերի հիմնական սխալը եղել է այն, որ նրանք անհատի իշխանությանը մեծ տեղ են տվել, որի հետևանքով «Մեր իշխանությունն ընկավ, եթե չասենք նախ մեր իշխանների անիշխան լինել ջանալու ու ձգտելու պատճառով, այսինքն՝ կամեցան գրավել առանձնակի իշխանություններ, որպեսզի այն, ինչ-որ ինքնագլուխ կերպով, միայն իր*

[33] *Հ. Շ ա հ ա մ ի ր յ ա ն, Շ. Շ ա հ ա մ ի ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 25:*
[34] *Նույն տեղում, էջ 32:*
[35] *Տե՛ս* И. С. Н а р с к и й. Западноевропейская философия XVIII века, с. 196.
[36] *Հ. Շ ա հ ա մ ի ր յ ա ն, Շ. Շ ա հ ա մ ի ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 16:*

կամքով ու մտքով կամենա դատել, որոշել, հասնել դրան առանձին, առանց որևէ մեկի հետ խորհրդակցելու»[37]: Որպեսզի անցյալի սխալները չկրկնվեն, մեր ժողովրդի ազատությունն ապահովվի, «իշխանությունը գոյություն պետք է ունենա ոչ թե միայն մեկի դատողության և կառավարության շնորհիվ, այլև ավելի լավ կլիներ, եթե իշխանությունը մշտապես լիներ ընտիր-ընտիր, մեծամեծ և տեսակ-տեսակ խորհրդականների ու անխախտ սահմանադրությամբ և անջնջելի օրենքներով»[38]: Հայաստանում պետք է ստեղծել մի այնպիսի պետություն, որ «հայոց ազգից բոլորն էլ ազատորեն, բնական բնությամբ թագավորեն իրենց ու իրենց տան վրա, վերացնելով խեթ, նախանձ և ժլատություն, ... (որ) մեկը մեծ չլինի, իսկ մյուսը փոքր, ամենքն էլ հավասարապես վայելեն թագավորության շուքը՝ իրենց ծնունդի ժամանակ և հավասար թագավոր մնան ամբողջ իրենց կյանքում իրենց սեփական երկրի վրա»[39]: Որտե՞ղ է ասված, թե միայն մի մարդ կարող է թագավորել ողջ աշխարհի ազատ ժողովուրդների վրա, իսկ ժողովուրդը, ամբողջությամբ վերցրած, անկարող է ինքն իրեն կառավարել, հարցնում է Շահամիրյանը: Հռոմեացիների փորձը հակառակն է ապացուցում, ասում է նա: Հենվելով այդ փորձի վրա՝ հեղինակն այստեղ ևս բազմաթիվ հիմնավորումներով փորձում է ցույց տալ, որ օրենքներով կառավարվելը բխում է բոլորի շահերից, բարի է ու օգտավետ: Շահամիրյանը գրում է. «... մեզ և մեր երկրի համար չափից լավ կլինի, եթե հայ ազգը ամենքը ազատորեն, իրենց բնական բնությամբ թագավորեն սեփական տանը... և իրենց կյանքի բոլոր օրերին սեփական երկրի վրա ընդմիշտ թագավոր մնան»[40]: Ինչպե՞ս պետք է իրականացվի առաջին հայացքից տարօրինակ թվացող այս թագավորությունը և որո՞նք են ընդհանուր թագավորության առանձնահատկությունները: «Եթե կամենում եք ազատ լինել, հավասար կերպով թագավորել ձեր երկրում, ազատորեն տեր լինել ձեր ստացվածքին, պատվի արժանանալ ձեր առաքինության համար, սրբել անօրինության կեղտերը և մաքրել ձեր խղճմտանքը, անհրաժեշտ է, որ ձեզ համար շինեք իմաստության տներ, ըստ Սողոմոնի խոսքի՝ ձեզ համար կանգնեցնեք սյուներ՝ խորհրդականներով և ձեր բանական հոգու զորությամբ, համահավասար ժողովրդի կամքի ու ցանկության համաձայն, ձեզ համար ընտրեք բարի օրենքներ՝ ապրելով ու կախման մեջ մնալով ձեր օրենքներից, քանզի ոչ ոք իրավունք չպիտի ունենա իշխելու ձեզ, բացի ձեր օրենքներից»[41],– գրում է նա: Արդարացի և ապահով կյանքի երաշխիքը միայն և միայն օրենքն է և ոչ թե կամայականության և բռնության մարմնացում հանդիսացող տիրակալը՝ թագավորը կամ մյուս իշխողները: «Որոգայթ փառաց»-ը ջատագովություն է օրենքին, օրենք, որի առաջ ազգի բոլոր զավակները, հասարակության բոլոր անդամները հավասարապես ենթակա են նրան, քանզի իրենք են ընդունել այն: Շահամիրյանը գրում է. «Ինչ որ դուք կազմեք, այն էլ պիտի իշխի ու թագավո-

---

[37] *Նույն տեղում, էջ 14:*
[38] *Նույն տեղում, էջ 21:*
[39] *Նույն տեղում, էջ 14:*
[40] *Նույն տեղում:*
[41] *Նույն տեղում:*

րի ձեր գործերի վրա, որպեսզի որևէ մեկը ճանապարհ չգտնի անօրինություն կատարելու, իսկ օրինախախտն էլ՝ զանգատվելու իր պատժի համար. չէ որ իր կատարածի վճիռը ինքն է կտրել՝ ըստ իր կամքի ու ցանկության, ինքն անձամբ ազատորեն թագավոր լինելով՝ օրենքներ է սահմանել և հրաման տվել թագավորելու իր վրա, ինքն իրեն պարտավորեցրել, հնազանդ դարձրել իր օրենքներին՝ համբերելով ու ընդունելով իր գործի հատուցումը՝ թե պատիվ և թե պատիժ՝ ըստ իր օրենքի»[42]:

Հիմնվելով Սուրբ Գրքի վկայության և տուն կառուցելու Սողոմոն իմաստունի խորհրդի վրա՝ հեղինակը գտնում է, որ տունը՝ Հայոց տունը, ասել է թե Հայկական պետությունը՝ «... այսինքն՝ ազգերի կառավարության համար բոլոր կարգադրությունները, պետք է հիմքով դնել հաստատուն վեմի, այսինքն՝ անխախտ, անշարժ, աներկմիտ, չավելացող ու չպակասող օրենքների վրա և նրա մեջ կանգնեցնել սյուներ՝ խորհրդականների կարգով»[43]: Ինչպես որ տունը, բնակարանը և ապարանքն են զարդարվում ու փայլում գեղեցիկ սյուներով, նմանապես և տերության ու կառավարության տունը հաստատուն կլինի և գեղեցկափայլ կմնա օրենքներով կարգադրությամբ և օրենսգետ խորհրդականներով: Խորագետ հեղինակը նկատում է, որ ընթերցողը կմտածի, թե ով կարող է կիրառել օրենքը, ինչպիսին պետք է լինի այդ մարդը, որովհետև լավ օրենքը դեռ գործի կեսն է: Ի պատասխան այդ հարցի՝ նա գրում է. «... նա, որին մեր օրենքը հրամայում է և շնորհում պաշտոնավարության հրաման, որ օրենքով կարգվի ու մնա որպես մեր ողջ ազգի սպասավոր և ջատագով մեր օրենքների: Այդ մարդը պարտավոր է լինել հայոց սպասավոր, ինչպես Տերն է ասում, թե՝ Ով որ ձեր մեջ մեծն է, նա է սպասավոր, կրտսեր պաշտոնակատար՝ ծառայելու համար ամենքին: Նա պետք է լինի հայոց ազգի բերանը և շարժվի այն գործի ու պաշտոնի մեջ, որ ավանդել է նրան Հայոց տունն իր ծերակույտի կողմից՝ համաձայն օրենքի: Նա ևս ըստ օրինաց պիտի ընդունի իր ձեռքի գործի պտուղը, ինչպես ես ու դու՝ ընթերցողդ: Նա չի կարող ոչ մի բանով առավելություն ունենալ, քան հայոց փոքրավորներից որևէ մեկը: Նրա առավելությունը ոչ մի բան չէ, եթե ոչ իր պաշտոնով հավատարմորեն ծառայելը հանուն իր ազգի: Նա սիրելի ու պատվելի է մեզ համար՝ իր հավատարմաբար ծառայելով: Իր պաշտոնավարության ողջ ժամանակաընթացքում նա միշտ պետք է մնա աներկյուղ և առանց ապավեն լինելու որևէ մեկին, քանզի ոչ ոք իր կամքով ի զորու չէ որևէ մեկի գլխից մի մազ անգամ վերցնել իրեն, ապա թե ոչ համաձայն օրենքի նա կտա կատարողների ձեռքի գործերի հատուցումը՝ թե պատիվ և թե պատիժ համապատասխան մեր դատաստանի վճռի և օրենքի»[44]:

Ներածության մեջ հեղինակն իր միտքն ընթերցողին հասանելի դարձնելու համար կիրառում է երկու եղանակ՝ կոնկրետ օրինակներ և տեսական հիմնավորումներ: Այդ կապակցությամբ նա գրում է. «Ինչպես սովորություն է, ամեն մի նորագյուտ բան ով որ կամենում է ցույց տալ որևէ մեկին, հատկապես հասարակ ժողովրդին, պետք է դիմի երկու եղանակի.

---

[42] *Նույն տեղում, էջ 15:*
[43] *Նույն տեղում, էջ 23:*
[44] *Նույն տեղում, էջ 36:*

մեկը՝ որ անհրաժեշտ է պարզամիտներին ցույց տալ՝ աչքին տեսանելի դարձնելով, և մյուսը՝ որ խոհական մարդկանց համար հարկավոր է ճշմարիտ ու անկեղծ բացատրություն տալ»[45]: Բացի այդ, առաջարկվող գաղափարները ևս հեղինակի տեսածի ու տեսական եզրահանգումների արդյունք են: Եվ դա ոչ թե չգիտակցված պատահականություն է, այլ խորը գիտակցված մեթոդաբանություն, երբ կոնկրետ օրինակները և առաջարկվող գաղափարների տեսական հիմնավորումները հաջորդաբար փոխարինում են միմյանց՝ առավել ակնառու դարձնելով հեղինակի ասելիքի թե՛ բուն բովանդակությունը, թե՛ նպատակը:

Ինքնակալական թագավորությունների պայմաններում ժողովուրդը կատարում է բռնակալի կամքը ոչ թե հոժարակամ և ոչ էլ օրենքով, այլ՝ վախի պատճառով: Բայց օրավուր հպատակի գիտակցության մեջ թուլանալու է իրենց իշխանից ունեցած նրանց վախը, ամրանալու է հնազանդվողների սիրտը, մինչև որ ծայրահեղ հուսահատության են դիմելու, այսինքն՝ ելնելու են ապստամբության: Վրեժխնդրության համար ոտքի են ելնելու տգետները, գահ է կործանվելու, իշխանական աթոռ՝ խորտակվելու, այլանդակ ու գազանաբարո մարդիկ իրագործելու են իրենց սրտի չար ցանկությունները, անասնաբար փառավորված են զգալու իրենց անօրեն շարժման համար[46]: Ահա այսպիսին է հեղինակների գնահատականը ապստամբության նկատմամբ: Բայց նույն բանը շատ ավելի դյուրությամբ ու հեշտությամբ կարելի է կատարել օրենքով և իրեն երկրի երեսին գիտակցել իբրև պատվավոր մարդ:

Հայ լուսավորական փիլիսոփայության գլխավոր առանձնահատկությունն այն է, որ դա անմիջական կապն էր ազգային-ազատագրական պայքարի տեսական հիմնավորման հետ: Հայ լուսավորիչներն ազգային-ազատագրական շարժման գործիչներ էին, այսինքն՝ ոչ միայն տեսականորեն մշակում էին օտար զավթիչների լծից Հայաստանի ազատագրության և հայկական պետության ստեղծման ծրագիրը, այլև ջանքեր էին թափում դա իրագործելու համար: Պաշտպանելով «բնական իրավունքի» տեսությունը՝ հայ լուսավորիչներն առաջադրում էին այն միտքը, որ յուրաքանչյուր ժողովուրդ պետք է տեր կանգնի իր «բնական իրավունքին», եթե դրանք խախտված են: Այս իմաստով նրանք դատապարտում են կրավորականությունը, հարմարվողականությունը, կոչ անում ընդվզել հակաօրինական, բռնապետական, անհատի ու ժողովրդի իրավունքները ոտնահարող իշխանությունների դեմ: «... մեզ անհրաժեշտ է մեռնել ազատ և մեզ համար նախապատրաստել հավիտենական կյանք, քան թե անկարգ ու ծառայական վիճակով ապրել ու մարմնով կենդանի մնալ կյանքում և հանդերձյալ ժամանակի համար նախապատրաստել վախճան հավիտենական»[47],– գրում է հեղինակը: Այսինքն, լինելով լուսավորիչներ, նրանք, այնուհանդերձ, գտնում էին, որ ժողովուրդն իրավունք ունի ապստամբել և դիմել զենքի, եթե անկախություն ու ազատություն ձեռք բերելու այլ ճանապարհ չկա :

---

[45] *Նույն տեղում, էջ 15:*

[46] *Նույն տեղում, էջ 41:*

[47] *Նույն տեղում, էջ 32:*

«Որոգայթ փառաց»-ի առաջին գրքում արծարծված տեսական գաղափարներն իրենց կիրառական դրսևորումն են ստանում երկրորդ գրքում, որի վերնագիրն է «Նշավակ»՝ Կարգադրություն հայոց՝ Հայաստանյայց աշխարհի կառավարման համար: «Նշավակ» բառը Շահամիրյանների նախասիրած բառերից է դեռ «Նոր տետրակից» սկսած: Նրանք այդ բառը գործածում են տարբեր իմաստներով՝ նպատակ, նշանակետ, օրինակ, ավանդ, օրենք, սահման, կարգ և այլն: Գրքի երկրորդ հատորի համար իբրև խորագիր՝ այն կիրառված է կարգադրություն, սահմանադրություն իմաստով և հոմանիշ է «Կարգադրություն հայոց» անվանմանը: Այսպիսով, «Նշավակը» կամ «Կարգադրություն հայոցը» այն օրենքների համակարգն է, որոնք անբեկանելի որոգայթ են, թակարդ՝ կալանավորելու և դատելու հանցագործներին, որոնք պարտավոր կդառնան հատուցելու իրենց կատարած չար գործերի համար և կբժշկվեն իրենց տկարությունից ու չարությունից, իսկ նրանց ձեռքերն ու զգայարաններն անշարժ կդառնան նոր հանցանքներ գործելուց: Մյուս կողմից էլ՝ Կարգադրության օրենքները պիտի խրախուսեն ու փոխհատուցում տան մարդկանց իրենց կատարած լավ գործերի համար:

Գրքի երկրորդ մասը սահմանադրության նախագիծն է (521 հոդված), որը ներկայացնում է ապագա անկախ Հայաստանի հասարակական-պետական կառուցվածքը, կառավարման մարմինների ստեղծման կարգը, նրանց իրավասությունները, քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները, տնտեսության լուսավորության, առողջապահության, զինված ուժերի կազմակերպման և այլ հարցեր:

Առաջին գլխում տրվում է Հայաստան երկրի տարածքային սահմանների մանրամասն նկարագրությունը և հավելվում, որ մի քայլաչափ իսկ չպիտի ավելանա կամ մի քայլաչափ պակասի երկրից: Այդ տարածքում մինչև հավիտյան պիտի պահպանվի Հայոց տունը՝ Հայաստանյայց օրենքներով՝ մոտ 300 հազար քառ. կմ տարածքով և 24 մլն բնակչությամբ: Դեռևս առաջին գրքի վերջում, խոսելով այդ տարածքների վերականգնման մասին, հեղինակը գրում է. «Հետևաբար ջանալ և չարչարանք թափել ստանալու համար այն, որ հայոց սեփական ժառանգությունն է, անարդարություն չէ, այլ արդարություն»[48]: Հայաստան երկրում ծնված ամեն մարդ պատիվ ունի իրեն անվանելու հայ և ինչ ազգի ու դավանության էլ պատկանի՝ պարտավոր է խոսել և կարդալ հայաբառ և հայատառ (գլուխ 2):

Ապագա հանրապետության բոլոր քաղաքացիներն օրենքի առաջ հավասար են հռչակվում, վերացվում են դասային աստիճանավորումները (գլուխ 3): Նրանք ունենալու էին խոսքի, դավանանքի, անձի ու գործունեության լիակատար ազատություն (գլուխ 5), թեև հայ ազգի համար պատվելի է Հայաստանյայց սուրբ եկեղեցու աստվածապաշտական կարգը (գլուխ 4): Որ հայը որ ուրանա քրիստոնեական իր հավատքը, որով մկրտված ու կնքված է Հայաստանյայց եկեղեցում պետք է դատապարտվի մահվան (գլուխ 6), իսկ Հայաստան աշխարհում բնակվող այլադավան-

[48] *Նույն տեղում:*

ներն ազատ են պահպանելու իրենց ավանդական ու վաղեմի ծեսերը (գլուխ 370): Ինչպես տեսնում ենք, այստեղ հեղինակը չի ընդունում եվրոպական լուսավորիչների աթեիզմը կամ խղճի ազատությունը, նպատակահարմար է գտնում պահպանել ու ամրապնդել կրոնը և բավարարվում է միայն այլադավանների նկատմամբ հանդուրժողականությամբ: Եկեղեցին բաժանվում է պետությունից, դպրոցը եկեղեցուց, մարդու և աստծու միջև միայն մի գերագույն իշխանություն է լինելու՝ օրենքը, որին ենթակա է լինելու նաև եկեղեցին: Բոլոր պաշտոնները վարելու էին լուսավորական հայերը (գլուխ 33): Հողի սեփականատեր կարող էին լինել միայն հայերը: Միայն նրանք կարող են գնել հող, վաճառել կամ ժառանգություն թողնել այն, իսկ այլադավաններն ու այլազգիները կունենային միայն հողի վարձակալման իրավունք (գլուխ 9): Հողի գնման իրավունքի փաստաթուղթը տրվում է Հայոց տան կողմից (գլուխ 7): Գնված հողը կարելի է վաճառել միայն հայի: Այլ հավատքի կամ ազգի մարդու հողը չի կարող վաճառվել, այն կարող է տրվել միայն վարձակալությամբ (գլուխ 8, 9): Երկիրն առատորեն վճարելու է Հայոց Հայրապետի Սուրբ Աթոռին, որպեսզի նրանք ոչ մի բանի կարիք չունենան (գլուխ 11): Ամենայն Հայոց ծայրագույն Հայրապետը բոլոր եպիսկոպոսներով հանդերձ իրենցից ընտրում են մի արքեպիսկոպոսի, որպեսզի նա Հայոց տանը երեք տարի ժամանակով զբաղեցնի տանուտերական պաշտոն՝ ունենալով երկու ձայն (գլուխ 12): Հայոց աշխարհի բոլոր պաշտոններն ընտրովի են: Յուրաքանչյուր գավառից, որն ունի մինչև 12 հազար տուն, ընտրվում են մարդիկ: Քանի մարդ որ ընտրվի, նրանց միջև վիճակ գցելով, դարձյալ ընտրվում է երկու մարդ, որոնց էլ իրավունք է տրվում տանուտերությամբ նստել Հայոց տան աթոռին և փոխանորդ լինել 12 հազար տան: Փոխանորդների ընդհանուր թիվը լինելու է ոչ ավելի, ոչ պակաս, քան 500 մարդ: Ընտրվելու իրավունքը սահմանափակվելու էր սոսկ բարոյական հատկանիշներով: Պատգամավորները (փոխանորդները) ընտրվելու էին 3 տարի ժամկետով: Ժամկետը լրանալուց հետո ժողովրդի կամքն է՝ եթե կամենան, կարող են հաստատել նույն մարդկանց, որ երեք տարով կրկին մնան փոխանորդ կամ կարող են նրանցից վերցնել պաշտոնը և տալ մեկ ուրիշին՝ օրենքով սահմանված կարգով: Այս ընտրությունները պետք է սկսվեն դեկտեմբեր ամսին և ընտրվածները հաստատվեն, որպեսզի հունվարի առաջին օրը նրանց ներկայացնեն Հայոց տուն, այնպես որ պաշտոնի անցնեն տարվա սկզբին, այսինքն՝ հունվարի 6-ին: Յուրաքանչյուր երկու փոխանորդից մեկը հավասար կարգով պետք է ընտրվի Հայոց տան տանուտեր, իսկ մյուսը՝ պաշտոնատար Հայոց տնից (գլուխ 14): Հայոց տանուտերերից և հայոց հայրապետության եպիսկոպոս փոխանորդից է ընտրվում, ընդունվում ու հաստատվում Հայոց կարգադրության օրենքը (գլուխ 16): Ընդունվող օրենքները կարող են քննարկվել երեք անգամ, իսկ չորրորդ անգամ դրանք դրվում են քվեարկության: Օրենքը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել են տանուտերերի մեծամասնությունը (գլուխ 17): Քվեարկության ժամանակ երկու ձայն ունեն Հայրապետը և նախարարը, իսկ մնացած տանուտերերից յուրաքանչյուրը՝ մեկական:

Երկրի բոլոր պաշտոնները տրվում են Հայոց տան կողմից, ըստ տվյալ պաշտոնը վարելու իշխանության վերաբերյալ պաշտոնական հրամանի (գլուխ 18): Բոլոր փոխանորդների կեսը մտնելու է տանուտերական կարգի մեջ՝ օրենսդիր մարմին, իսկ մյուս կեսն անցնելու է իշխանության պաշտոնի՝ գործադիր մարմին (գլուխ 19):

Բոլոր փոխանորդներից բարձրագույն դատավարության համար Հայոց տնից ընտրվելու են 25 մարդ՝ մեկը գլխավոր դատավոր, իսկ 24-ը՝ դատավոր լինելու պաշտոնավարության համար (գլուխ 29): Այլ կերպ ասած, հետևելով Լոկին[49] և Հոլբախին[50], Շահամիրյաններն իշխանությունը բաժանում են օրենսդիր, գործադիր և դատական մարմինների, որոնք ընտրովի են և օժտված առաջնային մանդատով, այդ թվում՝ քաղաքապետերը և զինվորական բարձրագույն պաշտոնյաները (գլուխ 28, 29, 30):

Կառավարման մարմինները (պետության լրտեսի, զինապետություն, կերակրապետություն, գանձապետություն, վառոդապետություն, կառապետություն, վրանապետություն, երկրաչափություն և տկարների ու աղքատների) ընտրվելու էին պատգամավորներից (գլուխ 27): Գերագույն և օրենսդիր իշխանությունը իրականացնելու էր Հայոց տունը (պառլամենտ), նախարարությունը (մինիստրների խորհուրդը)՝ գործադիր իշխանությունը: Հայոց տունն ունենալու էր իր նախագահությունը (կազմված 14 տանուտերից): Նախարարությունը բաղկացած էր լինելու նախարարից (նախագահ) և 12 տեղակալներից (գլուխ 20, 21): Նախարարը համարվում էր նաև երկրի արտաքին գործերի նախարարը և զինված ուժերի գերագույն հրամանատարը: Նախարարները պետք է վերադարձնեն տանուտերության հրամանը և նրանց տեղերը լրացվեն նոր ընտրվածներով, քանի որ համայն երկրից տանուտերերը պետք է լրիվ լինեն, իսկ նախարարը՝ զբաղեցնի իր իշխանության պաշտոնը (գլուխ 50): Հայոց տունը հսկելու էր նախարարության գործունեությունը և իրավունք ուներ փոխելու օրինախախտ կառավարությունը: Քաղաքական նկատառումներով նախագծում առաջարկվում էր նախարար ընտրելու մի այլ՝ բացառիկ տարբերակ. հին հայկական արքայատների, մասնավորապես Բագրատունիների շառավիղներից մեկն իր ցանկությամբ կարող էր ընտրվել ցմահ նախարար, եթե հավատարիմ ու հնազանդ մնար Հայոց տան սահմանած օրենքներին (գլուխ 52): Այդ բացառության նպատակն էր՝ շահագրգռել վրաց Բագրատունի թագավոր Հերակլ 2-ին, որին Մադրասի խմբակը կարևոր դեր էր վերագրում Հայաստանի ազատագրման գործում: Այստեղ Շահամիրյանը տուրք է տալիս Վոլտերին, ընդունելի համարելով նաև լուսավորյալ, իմաստուն միապետի իշխանությունը: Նախագծում տրված են կառավարական այլ մարմինների, դատարանների կազմակերպման կարգը, դրանց կառուցվածքն ու իրավասությունները (գլուխ 22, 23, 29): Հիմնվելու էին (ընտրությամբ) մայր կամ բարձրագույն դատարան, տեղերում՝ մնայուն, քրեական գործերի համար՝ երդվյալ դատարան: Բազմաթիվ հոդվածներ նվիրված են բոլոր հնարավոր հանցատեսակների նկարագրությանն ու

---

[49] *Տե՛ս* Д ж. Л о к к. Сочинение в трех томах, т. 3. М, 1988, с. 346–349.

[50] *Տե՛ս* Г о л ь б а х. Избранные произведения в двух томах, т. 2. М., 1963, с. 165–167.

դրանց պատժաչափերին: Դատավարությունն ընթանալու էր գրավոր, մեղադրյալն ունենալու էր դատապաշտպան: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ հեղինակն ընդունելի է համարում օրենքների մեկնաբանումը: Օրենքի ամեն հոդված պարունակում է բազմաթիվ մանրամասնություններ, որոնք կարող են բացատրվել իմաստուն մարդկանց կողմից: Օրենքի մասին բոլոր բացատրությունները, եթե օգտակար նպատակ ունեն և հաճո են Հայոց տան ցանկությանը, պետք է պատվի արժանանան, բայց ոչ այն բացատրությունները, որոնք դեմ են մարդու բնությանը (գլուխ 398): Ամեն պաշտոնյա մինչև իր պաշտոնի հրամանն ստանալը պարտավոր է երդվել Սուրբ Կտակարանի վրա՝ խոստովանելով, որ ինքը միշտ հավատարիմ կմնա Հայոց տանը (գլուխ 98): Բազմաթիվ հոդվածներ նվիրված են լուսավորության, տնտեսության զարգացման հարցերին, ընտանեկան հարաբերություններին և այլն: Կրթությունը բոլոր քաղաքացիների համար դառնալու էր ձրի, պարտադիր, առանց սեռի տարբերության: Կարիքավորների, որբերի կրթությունն ու բժշկությունը հոգալու էր պետությունը: Կրթությունն ու դաստիարակությունն իր մեջ ներառում էր նաև զինվորական պատրաստությունը: Ամեն տասներկու տարեկան տղայի ծնողները պարտավոր էին նրան նվիրել մի «թվանք» ու մի սուսեր և պարտադրել, որ զինվորական արվեստ սովորի (գլուխ 118): «Որոգայթ փառաց»-ը ընդհանրապես ներկա պատկերացմամբ ոչ միայն սահմանադրություն է, այլև ընտրական օրենսգիրք, քրեական օրենսգիրք, քաղաքացիական օրենսգիրք, վարչական օրենսգիրք, ընտանեկան օրենսգիրք, հարկային օրենսգիրք, աշխատանքային օրենսգիրք, զինվորական կանոնագիրք, պառլամենտի կանոնակարգ, պատերազմ վարելու, գերիների հետ վարվելու, պահակային հերթապահության կանոններ, փողոցներին անվանումներ տալու, տները համարակալելու, աղը թափելու հարցերը և այլն: Պետական մենաշնորհ է սահմանվում միայն աղի արտադրությունն ու վաճառքը: Հանքից կամ ջրից ստացված աղը, լինի քարաղ թե փշուր աղ, միշտ պետք է մնա որպես Հայոց տան ժառանգություն, և ոչ ոք չպետք է համարձակվի ձեռքը խոթել այդ գործի մեջ (գլուխ 356): Կարգավորվում են բոլոր գույքային հարաբերությունները, առուվաճառքի գործարքները, նվիրատվության ու ժառանգության, հարսանյաց ու թաղման, հյուր գնալու և հյուր ընդունելու կարգերը: Տրվում են օրենսդիր, գործադիր, դատական մարմինների կարգադրությունների, հրամանների, որոշումների, դատական վճիռների ու դրանց գանգատարկման օրինակելի ձևերը, ընդհուպ թղթի այն տեսակը, որի վրա պետք է գրված, ստորագրված և կնքված լինեն դրանք, ինչպես նաև կնիքի պահպանման ու օգտագործման կարգը: Սահմանվում են ժամանակի հաշվարկման կարգը, կշռաչափերը, հողատարածքի չափման, դրամական միավորները, հարկի, մաքսի ու տուրքի չափերը: Հեղինակն այստեղ սահմանում է նաև շքեղության հարկ՝ ճոխ առանձնատանն ապրելու, ըստ ձիերի քանակի «կառեթներից» օգտվելու, թանկարժեք հագուստ, զարդեր կրելու, արծաթապատ սեղան ու ճենապակե սպասք ունենալու և այլնի համար: Այն իր բնույթով պրոգրեսիվ հարկատեսակ է, այսինքն՝ որքան թանկարժեք են իրերն ու առարկաները, ծառայությունները, այնքան ավելի բարձր է տվյալ հարկաչափը (գլուխ 399,

426–440, 442–444): Սահմանվում են պաշտոնյաների վարձատրության չափերը, քաղաքաշինության, ճանապարհային երթևեկության կանոնները, զինվորականների, դատավորների համազգեստի գույներն ու ձևերը: Հեղինակները չեն մոռացել, որ ամեն ինչից բացի ժողովրդին անհրաժեշտ են նաև տոներ ու զվարճանքներ: Յուրաքանչյուր քաղաքի իշխան ամեն տարի չորս անգամ պետք է հանդես կազմակերպի և մարդկանց հրավիրի ընթրիքի ու պարելու՝ սուրբ Հայտնության, սուրբ Հարության, Վարդավառի և Սուրբ Խաչի տոներին (գլուխ 374): Հանրապետության գլխավոր նեցուկը դիտվում էր մշտական զորաբանակը (90 հազար զինվոր), որը համալրվելու էր վիճակահանությամբ (100 տղամարդուց՝ 5-ը, ռազմական ուսումն ու ծառայությունը՝ 7 տարի): Բոլոր փոխանորդներից սպարապետության համար Հայոց տան կողմից ընտրվելու է 9 մարդ, որոնցից երեքը համարվելու են առաջին, երկրորդ և երրորդ սպարապետ՝ անվանվելով կարմիր սպարապետ, կապույտ սպարապետ և դեղին սպարապետ՝ երեք տարի ժամանակով (գլուխ 24): Հիշվող երեք գույները՝ կարմիր, կապույտ և դեղին, նախնական ձևով խորհրդանշում են Հայաստանի Անկախ Հանրապետության (1918–1920 թթ.) և այժմյան Հայաստանի Հանրապետության պետական դրոշի գույները՝ կարմիրը, կապույտը և նարնջագույն-ծիրանագույնը:

Գրքի վերջում տրվում է նաև ներկա իմաստով երկրի տարեկան բյուջեն՝ «Փորձառություն Հայոց տան տարեկան եկամուտների և ծախսերի»: Այն ունի դասական կառուցվածք՝ եկամուտներ, ծախս և մնացորդ: Այն կազմված է ոչ թե դիֆիցիտով (պակասուրդով), այլ պրոֆիցիտով (ավելուրդով), որը գնում է պահուստային ֆոնդ: Այստեղ հետաքրքիր է դրա կազմման սկզբունքը, որը սկսվում ներքևից: Սկզբից հաշվարկ է կատարվում, թե տարվա ընթացքում որքան է կազմում յուրաքանչյուր անձի սննդի ու ապրուստի գինը (40 արծաթ դահեկան), այն բազմապատկվում է բնակչության ընդհանուր թվով (24 միլիոն մարդ), դրան գումարած պետության կարիքների այլևայլ ծախսերը և խնդիր է դրվում հավաքագրել բյուջե այնքան, որքան անհրաժեշտ է՝ կոնկրետ նշելով դրանց աղբյուրները: Բյուջեի կազմման փիլիսոփայությունն այստեղ ոչ թե այն է, թե այսքան հնարավորություն ունեմ ծախսելու, քանի որ այդքան եմ կարողանում հավաքել, այլ՝ պետք է հավաքել այնքան, որքան անհրաժեշտ է ծախսել, դեռ մի բան էլ ավելի: Բայց և այնպես հեղինակը կարծես կանխազգում է, որ «Թեպետ հիշյալ գումարը Հայոց աշխարհի բնակիչներից քաղելը խիստ ծանր է թվում, բայց ամեն բան, ինչ անգիտությամբ անհնարին է թվում, գործով դառնում է դյուրին ու հնարավոր»[51]: Առավել ևս, որ հայ ազգը օտար լծի տակ ավելի շատ հարկեր է վճարում, իսկ վաստակածի մնացած մասն էլ հափշտակում են գողերն ու ավազակները: Եվ այդ առումով հեղինակը նշում է, որ «... մենք հարկապահանջություն չենք դնում ավելի, քան տասնորդը, և տիրոջ պաշտպանությամբ բոլոր տարակուսանքից ապահով ենք դարձնում, նաև երաշխավորում ենք փոխհատուցել կողոպտվածներին, գերյալներին և այլն»[52] (գլուխ 519, 520): Վերջում

[51] *Հ. Շահամիրյան, Շ. Շահամիրյան. նշվ. աշխ., էջ 217:*
[52] *Նույն տեղում:*

հեղինակը համեստորեն նշում են, որ Օրինաց կարգադրության վերը շարադրված 520 գլուխները, իբրև օրինակ, միայն տեղեկացնելու համար են: Դրանք կամ դրանց մի մասը արժանավորություն կարող են ունենալ միայն այն դեպքում, եթե բոլոր տանուտերերի, Հայրապետի ու նախարարի, իշխանների ու գավառապետերի հաճությամբ ու կամքով կլինեն ու կհաստատվեն նրանց կողմից (գլուխ 521):

Այսպիսով, անդրադառնալով ժողովրդի իշխանության, իրավունքի գերակայության, ներկայացուցչական ժողովրդավարության, իշխանությունների տարանջատման, սոցիալական պաշտպանվածության, սահմանադրական արդարադատության և բազմաթիվ այլ սահմանադրական սկզբունքների, առաջին անգամ հայ իրականության մեջ ներկայացվում է պետական (սահմանադրական) իրավունքի նորմերի ամբողջական ու կանոնակարգված համակարգը՝ ոչ միայն ընդհանրացնելով հայ և համաշխարհային հասարակական մտքի նվաճումները, այլև պետական նոր մտածողության սկիզբ դնելով դարձավ միջազգային սահմանադրական զարգացումների անկյունաքարային արժեքներից մեկը:

Պատասխանելով իր իսկ այն հարցին, թե ինչո՞ւ հենց ինքը նախաձեռնեց այդ գործը, Շ. Շահամիրյանը համեստորեն նշում է, որ ազգի մեջ չեն պակասում այնպիսի իմաստունները, որոնք ավելի լավ կանեին դա, բայց ստիպված է խոսել ինքը, քանի որ նրանք բոլորը լռում են, իսկ հետագայում «.. առավել իմաստունները լրացնեն իմ գործի պակասությունները, եթե ախորժելի լինի նրանց ցանկություններին ու հաճույքին՝ ջանան գործադրել»:

«Իրավունքի և արդարության ծառի պտղաբերումները» միայն կարող են «արդար կառավարությունների» բարեպաշտ գործելակերպի հիմքը դառնալ՝ արդարության ու օրինականության մեջ փնտրելով անհատի ու հասարակության երջանկությունը, ելակետ ունենալով «... օրենքով ու արդարությամբ մեր կյանքը վարելու «հրամայականը – սա է «Որոգայթ փառաց»-ի հեղինակների մեծագույն պատգամը: Հ. Շահամիրյանը երանի է տալիս նրանց «... ովքեր կապրեն այն ոսկեզօծ ժամանակի մեջ», երբ «Հայաստանն ըստ օրենքի վայելի իր կյանքը» և փառավոր ոսկեբերան այն դպրին, ով կգա, կմեղադրի ու կհիշեցնի իր գրածի թերությունները և «Դա կլինի իմ մխիթարությունը և իմ չարչարանաց վարձը»: Մեծ հայրենասերը մահվանից հետո էլ ցանկանում է իմանալ իր ազգի՝ հայերի ազատագրության և անկախության լուրը, քանզի նրա տապանաքարի վրա գրված է՝ «Ողջույն ընդ քեզ դամբարանիս տառն ընթերցող, տուր ինձ լուրն ազատութեան ազգին իմոյ, որ եմ տենչող ...»:

«ЗАПАДНЯ ЧЕСТОЛЮБИЯ»
(К 230-летию издания)

ГРИГОР ТАНАНЯН

Р е з ю м е

В 1783 году в индийском городе Мадрас была издана «Западня честолюбия»– труд, в котором впервые сформулированы основные положения конституционной республики и парламентского правления. В обстоятельной вводной части авторы осуждают феодально-монархические порядки, обосновывают пути освобождения Армении от турецко-персидской тирании и принципы установления демократических порядков. Вторая книга «Западни честолюбия» называется «Ншавак», что подразумевает «распоряжение», «конституция» и является синонимом названия «Армянская конституция». Книга является проектом Конституции (521 статья) и представляет общественно-государственную структуру, порядок создания и правомочия органов управления будущей независимой Армении, права и обязанности ее граждан, вопросы, касающиеся организации экономики, просвещения, вооруженных сил и другие вопросы. Эта работа является уникальным достижением в истории общественно-правовой мысли. Представленные в ней определенным образом систематизированные идеи являются не только результатом глубоких теоретических обобщений, но и представляют ценность с точки зрения развития международных конституционных процессов.

“VOROGAYT PARATS”
(To the 230th anniversary of publication)

GRIGOR TANANYAN

S u m m a r y

In “Vorogayt Parats” (1783, Madras, India) for the first time were formulated the main provisions of constitutional republic and parliamentary government. In the extensive preface feudal-monarchical orders are condemned, the liberating ways from Turkish-Persian despotism are substantiated, and principles of democratic orders are established. The title of the second book of “Vorogayt Parats” is “Nshavak,” which is applied with the meanings of “order” and “constitution,” and is a synonym to the name of “Armenian Constitution.” The latter is a design of constitution (521 articles) and presents the social-state structure, the establishment order of government bodies and their authorities, rights and responsibilities of the citizens, organization of economy, education, armed forces and other issues of future independent Armenia. This work is a unique achievement of social-legal thought. The presented concepts, besides being the results of theoretical deep generalizations, are also cornerstone values of international constitutional development.